

ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

Արեւելի Առօսք, ստանձնելով պաշտպանութիւնը իր «անքամիր» խմբագրին, փոխանակ լուսաբանելու մեր հարցապնդումը, զրահապնդուած անոր զրարան դիմակովն ու մանաւանդ ոգիովը, մեր դէմ եւս գործածել կը փորձէ զրպարտութեան նոր օրիրու իրենց յառուղի գէնքը, յայտարարելով մեզ «Ռամկավար» եւ «յառաջդիմական»: Խակ թէ այս որակումները ի՞նչ կը նշուանկան Արեւելի Աշուտներուն համար, մեկնութեան չի կարողիր: Զէս սիրելի Աշոտիկ, այդ ներկդ սիսալ տեղ քաել կը փորձես, իսկ յարամոռութեանդ համար՝ նուազագոյն պէտք է ամենաս:

Ըրած զրպարտութիւն է, եւ արդէն առանց անոր ի՞նչ կը մնայ քեզի ընել եւ սաել: Մենք, սիրելի Աշոտ, ոչ «Ռամկավար» ենք եւ ոչ «յառաջդիմական», անպատուուաթիւն չէ անջուշ Ռամկավար, յառաջդիմական կամ՝ Դաշնակցական լինելը, սակայն իր գերին գիտակցութիւնը աւնեցող որեւէ եկեղեցական՝ թոյլ չի կրնար տալ ինքնինքին այդ կարգի բաներուն պատկանելու, կը հասկնաս, միամտութիւն եւ ինքնինքին կեղծող գրասան: Խակ անոնք որ են, եւ կամ Կուզեն ցոյց տալ թէ են, ատիկա քեզիպէսներուն կը թողունք «Ա՛ՅՍ» կամ «Ա՛ՅՆ» կողմ արձանագրելու համար: Թող ծավալ ըլլան բոլոր անոնք՝ որոնք «Ա՛ՅՍ»ին ու «Ա՛ՅՆ»ին կօժիկն հագած, այս ու այն գետինները կը կոխվածնն, այդպիսինքը Հայ Եկեղեցին չէ որ կը ծառային, աւելին: Հայ Եկեղեցին պէտք յունի այդպիսինքը ուներուն:

Արեւել ուրախութիւն ունի յայտնելու, թէ թուրի, մուրի, եւ զրպարտութեան թնօսւի իր խմբագրականները, կարգ մը անսանձ», «անհակակշռ» եւ «քաղաքական վառագաւուր մարզանքներ» ընդողներու դիմակիները, այսկերպ մէկդի դնել տուած են, որոնց առաջինն է անոտարակոյս նորին Ս. Ծծութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, եւ վերջինը Սիօնի խմբագիրը: Ա՛, ողորմնելի Աշոտիկ, որ միամտութիւն ունիս կարծելու, եւ հաւատացնո՞ւի ուզելու մանաւանդ՝ թէ բան մը գիտես եւ իրը թէ բաներ կ'ըսես: Մենք յայտնի ենք ի՞նչ բանի քանի որ պատկանինք, իսկ կուն... պ. Աշոտիկ, ամիկա դաս- րավբրդի խորհուրդն է բոլոր դարաշրջիկներու:

Սիօնի խմբագրականները «առօտի, կեղծիքի եւ չարափոխութեան» գիր մը իսկ չօսմէին իրենց մէջ, այլ սրոցաւ կոչ մը զգաստութեան, պարկշտութեան եւ մանաւանդ հայաբարոյութեան անտնց՝ որոնք սովոր են ծախիւու ամէն ին, էն առաջ ինքն գինենին... :

Եթոյ Արեւելի խմբագիրը, իր վիշիին, Աշոտիկին միջոցաւ, յսու կուում ընկլ կը փորձէ իր ըսածները, յայտարարելով թէ իր, եւ իր նմաններուն պայքարը, մասնաւորներուն նկատմամբ չ եղեր, սակայն Արեւելի ծանօթ վեց խմբագրականները ատոր հակառակ փաստաերը ունին արքէն, կը Եկեղեցինը որ Աշոտիկը անգամ մը եւս կարդայ զանոնք, եթէ խելամատ Վուզէ սրբագրել իր աշխատութիւնը: + Տականն Աշոտիկը հայրենասիրութեան եւ հաւատքի գասեր կը փորձէ տալ մեզի: Իսու այլեւս ծիծաղը կը լայնայ, չէ անուշիկ Աշոտ, ամէն բան լուէ, բայց այդ զասերը մի տար, զրադ կը խընդան: Մենք մեր հայրենասիրութիւնը մեր երկիր գարաւոր արզանդէն նետերինս քերած ենք, այսինքն Վանի, քեզի համար յաւէտ անմատելի բարծունքէն, զայն չենք սովոր ոչ Պոլսոյ պալքիններէն եւ ոչ ալ իրը վարձարութիւն... Արեւելէն:

Խակ Վիսոնի հարցապնդումին պատասխանը ցրուիչն միջոցով տալ ուզելու պարագան, անհասկնամի մնաց մեզի, արդեօք պ. Աշոտիկն ու «վարձկանը» իրենց քեկուած կռնակով ի վիճակին չե՞ն կրելու թիթեղ մը լինուած այդ լրտութիւնը, թէ ոչ Արեւելի համար իր վարձկան խմբագրէն անմիջապէս վերջ՝ նրուսաղէմի իրենց ցրուիչը կուգայ: Այս է ի վերցոյ բաժինը բոլոր վարձկաններուն:

Ի՞նչ զուգադիպութիւն, որ Արեւելի երուսաղէմի ցրուիչը ըլլայ Փիզիքական ցանագար մը, նման Արեւելի մտագար թշուառականին:

ԽՄԴ.